ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՄՆԷԱՃԱՊՁԲ-22/117 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով համակարգչային տեխնիկայի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստ

Հայտերի բացումը տեղի ունեցավ 31.10.2022թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան
Հարություն Մուշեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմ գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ» ՍՊԸ
2	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ
3	«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ		«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ		«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	400000	340000	408000	-	-	-	-

2	170000	150000	180000	140000	168000	141500	169800
3	50000	42000	50400	-	-	41500	49800

4. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

4.1 «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ 2-րդ չափաբաժնի և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ 3-րդ չափաբաժնի մասով կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.2 «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի 2-րդ չափաբաժնի մասով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում անհրաժեշտ է ներկայացնել մատակարարվելիք ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ բացառելով համարժեք ապրանքանիշերի ներկայացումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.3 «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում /Հավելված 1.2/ 4.7 և 4.15 և ենթաբաժինները լրացված չեն,
- առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում անհրաժեշտ է ներկայացնել մատակարարվելիք ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ բացառելով պարամետրերի հնարավոր շեղումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին շտկել 4.2 և 4.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.5 Հանձնաժողովի նիստը շարունակել մասնակիցների կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 02.11.2022թ., ժամը 12:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 02.11.2022թ ժամը 12:30-ին

5. Արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

5.1 «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են 4.2 և 4.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից՝
2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին,
3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի հայտը 2-որ
չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.3 Հակադարձ աճուրդի արդյունքում «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի հայտը 1-3-րդ չափաբաժինների մասով համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու
հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատման արդյունքների մասին

7.1 Հաստատել 2 և 3-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին, իսկ 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգերի չկայացման մասին
հայտարարության տեքստերը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել նշված հայտարարությունները
հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին գնումների մասին ՀՀ
օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը՝ գնման գործընթացը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝
հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արմեն Ավետիսյան /նախագահ/

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Հարություն Մուշեղյան

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/